ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ

«ՅԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ»*

Մայր Աթոռ Ս. Էջմիածին հոգեկան ջերմութեամբ կ՚ողջունէ պայծառ յիշատակը Մեծի Տանն Կիլիկիոյ Տ. Տ. Բաբգէն Կիւլեսէրեան աթոռակից Կաթողիկոսի, անոր ծննդեան հարիւրամեակի առիթով:

Հոգելոյս Կաթողիկոսը մեր դարաշրջանի Հայ Եկեղեցւոյ կեանքին մէջ բարձունք մը հանդիսացաւ, ոգեկան իմացական փարոս մը, որ իր գործունէութեան ընթացքին լոյս և մխիթարութիւն ափոեց իր շուրջ, իբրև ներշնչեալ և գիտուն հոգևորական, իբրև Հայ Եկեղեցիի վաստակաւոր մշակ ու հզոր նկարագիր, իբրև ժողովուրդի դաստիարակ և հմուտ հրապարակագիր, իբրև Կիլիկեան Աթոռի լաւագոյն աւանդներուն նախանձախնդիր պահապան և իբրև հաւատարիմ և նուիրեալ զաւակը Սուրբ Էջմիածնի:

Այսպէս է, որ Տանն Կիլիկիոյ Աթոռին հանգուցեալ Գահակալը ամուր կանգնած կը մնայ մեր երանաշնորհ Հարյապետներու շարքին:

Այս օրերուն մանաւանդ, ի տես ափիոնի հայ եկեղեցական կեանքի պառակտեալ վիճակին, առաւել պայծառութեամբ կը շողայ հանգուցեալի անձնաւորութիւնը, անոր օրինապահ և ուխտապահ արի հոգին:

Արդարև, Բաբգէն Կաթողիկոս եղաւ և մնաց մինչև իր կեանքի վերջը, առաքեալը մեր Եկեղեցւոյ միութեան և մէկութեան նուիրական սկզբունքին, Սուրբ Էջմիածնի Աստուածային օրինութեան ներքև: Ինչքան յուզիչ է և ինչքան թելադրական յիշել, թէ Անթիլիասի միտոնօրինութեան սուրբ պահուն, իր մաքուր ձեռքով, Սուրբ Էջմիածնէն բերուած միտոնը խառնեց օրինուող միտոնին, ի նշան անքակտելի միութեան ու եղբայրութեան Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ:

Լոյս և օրինութիւն և խաղաղութիւն Բաբգէն Կաթողիկոսի արդար հոգիին:

Թող անթառամ մնայ անոր բարի յիշատակը մեր Եկեղեցւոյ և մեր սրտերուն մէջ:

«Խոստովան եղերուք յիշատակի սրբութեան նորա» (Սաղմ. ՂԶ.):

«Երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին, զի գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Յայտնութ. ԺԴ. 13): Ամէն:

26 մայիս 1967
Մայր Աթոռ Ս. Էջմիածին

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

* Հառաջիկա տարի լրանում է Մեծի Տնան Կիլիկիո երջանկահիշատակ Տ. Տ. Բաբգեն աթոռակից կաթողիկոսի ծննդյան հարյուրամյակը:

Այս առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ջերմորեն ոգեկոչելով մեծանուն եկեղեցականի բարի հիշատակը, գրի է առել օրինության սույն խոսքը: